# Հայաստանի Հանրապետություն
# Արմավիրի մարզ
# Արգավանդի համայնքապետարան

✉ գ. Արգավանդ
☎ /093.99-02-09/

«30» «04» 2019թ.
N 129

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ `Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մաթևոսյան՝

Ձեզ ենք ներկայացնում Արգավանդ համայնքի ավագանու 18.04.2019թ. հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 10 թերթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԳԱՎԱՆԴԻ ... 04403278 Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 26

ԿԱՅԱՑԱՎ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ԱՎԱԳԱՆՈՒ 4 ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ:ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԵՑ ՀԱՍՏԱՏԵԼ ՕՐԱԿԱՐԳԸ
Որոշում թիվ 26

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ավագանու 2019թ.Ապրիլի 18-ի հերթական նիստի օրակարգը՝

1.1 Դիմումների քննարկում

զեկ.Ա.Աղաջանյան

1.2 Համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու մասին արձանագրության քննարկումը.

զեկ.Ա.Աղաջանյան

1.3 Համայնքային սեփականության հողի աճուրդ վաճառք

զեկ.Ա.Աղաջանյան

1.4 Համայնքի սպորտային դահլիճի մասին

զեկ.Ա.Աղաջանյան

1.5 Մանկապարտեզի սննդի սահմանված քանակի ցանկի հաստատումը

զեկ.Ա.Աղաջանյան

1.6 Համայնքի սեփականության ջրային տարածքի վարձակալության մասին

զեկ.Ա.Աղաջանյան

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 27

### ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքապետարան էին դիմել համայնքի բնակիչներ Ալվարդ Կարապետյանը և Վալենտինա Ֆահրադյանը օգնության խնդրանքով: Համայնքի ղեկավար Ա. Աղաջանյանը ներկայացրեց ,որ Ալվարդ Կարապետյանի ամուսինը հաշմանդամ է 1 ոտքը ամպոտացիդի է ենթարկված,իսկ Վալենտինա Ֆահրադյանը տառապում է չարորակ հիվանդությամբ,2 ընտանիքներն էլ գտնվում են սոցիալապես ծանր վիճակում չեն կարողանում հոգալ բուժման ծախսերը: Ավագանին քննարկելով հարցը միաձայն քվեարկեց դրական օգնության հատկացման օգտին: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով բնակիչների դիմումները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Արգավանդ համայնքի բնակիչներ Ալվարդ կարապետյանին հատկացնել 30000/երեսուն հազար/ ՀՀ դրամ ,իսկ Վալենտինա Ֆահրադյանին 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ օգնություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 28

### ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Ա.Աղաջանյանը ներկայացրեց մարզպետարանի կողմից իրականացված ստուգումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունը: Աշխատանքային խումբը ստուգման արդյունքում հայտնաբերել է հետևյալ խախտումները՝

1.Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օգտագործելուց հետո մեկտարյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում չի կատարվել համապատասխան փոփոխություններ:

2.Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գործընթացներում չի ձևավորվել համայնքի ղեկավարին կից խորհրդատվական մարմին:

3. Գույքահարկի և հողի հարկի գանձված գումարները սահմանված ժամկետներում չեն մուտքագրվել տեղական գանձապետական բաժանմունքի համապատասխան գանձապետական հաշվին:

4. Համայնքի ղեկավարը չի կազմել և վարել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը:

Ելնելով վերոգրյալից

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Նախատեսված ժամկետներում վերացնել նշված խախտումները:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 29

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԻ ԱճՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱճԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ նշանակության այլ հողը 0,6609 հա /ծածկագիր 04-018-0160-0020/ օտարել բաց աճուրդային կարգով: Մեկնարկային գին սահմանել 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2.Մասնակցության վճար սահմանել 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ:
3.Առաջարկել համայնքի ղեկավարին իրականացնելու սույն որոշումից բխող համապատասխան գործառույթնորը, աճուրդն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգին համաձայն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 30

### ՍՊՈՐՏԱՅԻՆ ԴԱՀԼԻՃԻ ՄԱՍԻՆ

Ա.Աղաջանյանը ներկայացրեց,որ համայնքի սպորտային դահլիճի աշխատանքները սկսելու համար անհրաժեշտ է նշանակել մարզիչ և ստեղծել 3 խմբեր՝ մեծահասակների,կանանց և երեխաների, որոնց հետ մարզումները կանցկացնի մարզիչը: Մարզումների համար կան անհրաժեշտ բոլոր մարզագույքերը:
Ավագանին քննարկելով հարցը տվեց իր հավանությունը մարզադահլիճի բացման, մարզիչի նշանակման և վարձավճարների սահմանման համար:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արգավանդ համայնքի մարզադահլիճի համար նշանակել մարզիչ պայմանագրայի հիմունքներով,աշխատավարձի չափը սահմանել մինիմալ աշխատավարձի չափով:
2. Մարզադահլիճ հաճախողների համար սահմանել հետևյալ վարձավճարները՝ մեծահասակների և կանանց խմբերի համար ամսական 5000/ հինգ հազար/ ՀՀ դրամ,իսկ երեխաների համար ամսական 2000/երկու հազար/ ՀՀ դրամ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 31

### ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՍՆՆԴԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՔԱՆԱԿԻ ՑԱՆԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել մանկապարտեզի սննդի սահմանված քանակի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՄԱՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ

**Հավելված**
**Արգավանդ համայնքի**
**Ավագանու թիվ 31**
**որոշման**

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԻՋԻՆ ՕՐԱԲԱԺՆԻ

ՑԱՆԿ 2019 ԹՎԱԿԱՆ

| N | ԱՆՎԱՆՈՒՄ | ՔԱՆԱԿ |
|---|---|---|
| 1 | Հաց | 120գ |
| 2 | Կարտոֆիլ | 190գ |
| 3 | Բանջարեղեն | 270գ |
| 4 | Խտացրած կաթ | 15գ |
| 5 | Թթվածքաբլիթ | 30գ |
| 6 | Կոնֆետ | 10գ |
| 7 | Շաքարավազ | 45գ |
| 8 | Կարագ | 5գ |
| 9 | Կենդանական ծագման յուղ | 15գ |
| 10 | Ձու | 0,5հատ |
| 11 | Հավի միս | 70գ |
| 12 | Թթվասեր | 15գ |
| 13 | Պանիր | 6գ |
| 14 | Թեյ | 0,2գ |
| 15 | Տոմատ | 5գ |
| 16 | Աղ | 5գ |
| 17 | Մեղր | 12գ |
| 18 | Սոխ | Ընդ.օրը 0,5կգ |
| 19 | Մակարոնեղեն և բնդեղեն | 30գ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արգավանդ, (093) 990209, argavand.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 32

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 12-04-2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող ջրային տարածքը 0,5141 հա /ծածկագիր 04-01[illegible]8-0160-0002/ մրցութային կարգով տրամադրել 25 տարի ժամկետով վարձակալության, մեկնարկային 1 տարվա վարձավճար սահմանել 14171 / տասնչորդ հազար մեկ հարյուր յոթանասունմեկ / ՀՀ դրամ:

2. Մրցույթի մասնակցության վճար սահմանել 1000/ մեկ հազար/ ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ԾՄԱԿՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՇԱՎԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ**